



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ N 1510/02/15թ.
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 1510/02/15թ.
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Հ.Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

5-ին օգոստոսի 2016թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ա.Հայրապետյանի
դատավորներ՝ Ա.Աբրահամյանի
Գ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Արամայիս Հայկի Մարգարյանի ընդդեմ Կարեն Կամոյի Մարգարյանի, ԼՂՀ կառավարության աշխատակազմի, ԼՂՀ արդարադատության նախարարության Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտարի՝ ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն ու դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի մայիսի 31-ի որոշման դեմ պատասխանող Կարեն Մարգարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

2015թ. օգոստոսի 24-ին Արամայիս Հայկի Մարգարյանն /այսուհետ՝ նաև Հայցվոր/ ընդդեմ Կարեն Կամոյի Մարգարյանի /այսուհետ՝ նաև Պատասխանող/, ԼՂՀ

կառավարության աշխատակազմի /այսուհետ՝ նաև Կադաստր/ ԼՂՀ ԱՆ Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակի պետնոտարի /այսուհետ՝ նաև Նոտար/ հայցադիմում է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ նաև Դատարան/ իրեն Ստեփանակերտ քաղաքի Սպարապետ փողոցի 13 հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի 1/2 մասի նկատմամբ ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, 03.10.2003թ. Կարեն Մարգարյանին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն ու դրա հիման վրա 06.11.2003թ. կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասին պահանջներով:

Դատարանի 2015թ. նոյեմբերի 5-ի որոշմամբ Մարքարա Հայկի Մարգարյանը, Ռայա Հայկի Մարգարյանը, Ռոզա Հայկի Մարկարովան և «Ջարգացման Հայկական բանկ» ԲԲ ընկերությունը ներգրավվել են որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ պատասխանող կողմում:

Դատարանը 2016թ. մարտի 4-ի վճռով հայցը մերժել է:

2016թ. մարտի 29-ին Հայցվորի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանը նշված վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք:

2016 թվականի մայիսի 31-ի որոշմամբ ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ բողոքը բավարարել է, Դատարանի 2016թ. մարտի 4-ի վճիռը բեկանել և փոփոխել: Որոշվել է՝ Արամայիս Հայկի Մարգարյանի հայցը բավարարել մասնակիորեն. Արամայիս Հայկի Մարգարյանը ճանաչվել է Նադեժդա Մանասի Մարգարյանի թողած ժառանգության՝ Ստեփանակերտ քաղաքի Ս.Սպարապետ փողոցի թիվ 13 բնակելի տան և հողամասի 1/2 մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Ստեփանակերտ քաղաքի Ս.Սպարապետ փողոցի թիվ 13 բնակելի տան և հողամասի վերաբերյալ Ստեփանակերտի նոտարական գրասենյակի պետական նոտար Ն.Գրիգորյանի կողմից 2003թ. սեպտեմբերի 3-ին Կարեն Կամոյի Մարգարյանի անվամբ տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-8 մատյանի 012373 համարի տակ 2003թ. նոյեմբերի 6-ին Կարեն Կամոյի Մարգարյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ 1/2 մասով, ճանաչվել է անվավեր:

Վերոնշյալ որոշման դեմ 2016 թվականի հունիսի 29-ին վճռաբեկ բողոք է բերել պատասխանող Կարեն Մարգարյանը, որը Գերագույն դատարանի 2016 թվականի հուլիսի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել հայցվորի ներկայացուցիչ Վ.Ա. Հայրապետյանը:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի, 229-րդ հոդվածի, 230-րդ, 230²-րդ, 230³-րդ, 230⁴-րդ, 231-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի, իրավահարաբերության պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 530-րդ, 549-րդ հոդվածների պահանջները:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները, ճիշտ չի գնահատել գործում առկա ապացույցները և պատասխանող կողմի առարկությունները, որի արդյունքում հանգել է ոչ ճիշտ եզրահանգման: Մասնավորապես, պատասխանող կողմը թե առաջին, թե վերաքննիչ ատյանի դատարաններում դատաքննության ընթացքում նշել է, որ Հայցվորը ինչպես մինչև ծնողների մահը, այնպես էլ դրանից հետո ինքնահոսաբար շարունակել է իր ընտանիքով ապրել իր ընտանիքի կողմից զբաղեցրած երեք սենյակներում ու որևէ փաստ, կապված առանձին դուռ բացելու, նոր դարպաս կառուցելու, ցանկապատ փոխելու և տանիքի վերանորոգման աշխատանքներ իրականացնելու հետ, պատասխանող կողմը չի ընդունել, այլ հակառակը առարկել է դրան, նշելով, որ Հայցվորն ու նրա եղբայրը ծնողների աջակցությամբ ապահովվել են առանձին բնակարաններով և ծնողների հայտարարության համաձայն այդ տունը պետք է մնար Կամո Մարգարյանին ու նրա ընտանիքին:

Բացի այդ, Հայցվորը հաշվառված էր Ստեփանակերտի քաղաքապետարանի բնակարանային հերթացուցակում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացի և նույնիսկ սեփականության իրավունքով իրեն պատկանող տունը նվիրել է մյուս եղբորը՝ Մարքարա Մարգարյանին ու այդ ամենից ելնելով Հայցվորը չի էլ ցանկացել ընդունել ժառանգությունը, քանի որ իսկզբանե գիտակցում էր, որ դա իրենը չէ ու սկսել է իր համար տուն կառուցել և բազմիցս ասել է Պատասխանողին, որ տունը կառուցելուց հետո դուրս է գալու իր կողմից զբաղեցված սենյակներից: Նա իր ընտանիքի հետ ինչպես զբաղեցրել է տան առաջին հարկի երկու սենյակները, այդպես էլ շարունակել է ապրել շուրջ 27 տարի: Այն դեպքում, երբ տունը բաղկացած է տասներկու սենյակներից և տան մյուս սենյակները, ինչպես նաև տան բակում գտնվող շինությունը զբաղեցված և օգտագործվում են իր կողմից, ավելին, բակում կառուցված շինությունները, որոնք կառուցվել են իր կողմից, տան երկրորդ հարկի սենյակները և առաջին հարկի մյուս սենյակները վեց տարուց ավելի հանձնված են վարձակալության ու վարձավճարը ստանում է ինքը: Հաշվի առնելով նշված հանգամանքները տատը՝ Նադեժդա Մարգարյանը այդ տունը կտակել է իրեն՝ որպես իր որդու Կամո Մարգարյանի ժառանգ:

Նշելով, որ Հայցվորի նշված տանը հաշվառվելու և ապրելու հանգամանքը դեռևս չի նշանակում, որ նա ցանկություն է ունեցել ընդունել ժառանգությունը, որի մասին է վկայում նաև այն, որ նա որևէ ակտիվ գործողություն չի կատարել ուղղված ժառանգությունն ընդունելուն, իսկ ինչ վերաբերում է նրա հետ կնքված ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրերին, ապա նշված

փաստաթղթերից դիտվում է, որ դրանք կնքվել են ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետն անցնելուց հետո ու չեն կարող վկայել այն մասին, որ այդ անձը ցանկություն է ունեցել ընդունել ժառանգությունը:

Բողոքաբերը նշել է նաև, որ եթե Հայցվորը իրականում ցանկություն է ունեցել ժառանգությունն ընդունել, ապա ինչու՞ չի փորձել անցած 27 տարիների ընթացքում պարզել իր փայաբաժինը, ինչու՞ չի ցանկապատել և առանձնացրել այն, չի ձևակերպել իր անվամբ ու չի արգելել Պատասխանողին իր հայեցողությամբ լիարժեք տիրապետել և օգտագործել առանձնատան մեծ մասը ու նշված գործողությունների չկատարումը նույնպես վկայում է, որ Հայցվորը չի ցանկացել և չի ընդունել ժառանգությունը: Բողոքաբերի կարծիքով նշված հանգամանքներին Դատարանը ճիշտ գնահատական է տվել ու եկել ճիշտ եզրահանգման, իսկ Վերաքննիչ դատարանը անտեսելով Դատարանում հետազոտված ապացույցները և խախտելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող Հայկական ԽՍՀ 1964 թվականի քաղաքացիական օրենսգրքի 82-րդ, 87-րդ և 91-րդ հոդվածների պահանջները հանգել է ոչ ճիշտ եզրահանգման, նշելով, որ սույն գործով կիրառելի չէ հայցային վաղեմությունը, քանի որ Հայցվորը 22.07.2015 թվականին պատասխան գրությամբ է տեղեկացել մոր կողմից տունը կտակելու և այն Կարեն Մարգարյանի սեփականություն լինելու մասին ու նման պայմաններում կիրառելի է ոչ թե Հայկական ԽՍՀ 1964 թվականի քաղաքացիական օրենսգրքի պահանջները, այլ 2001 թվականի հուլիսի 1-ից ԼՂՀ-ում կիրառության մեջ դրված ՀՀ 1998 թվականի քաղաքացիական օրենսգրքի հայցային վաղեմությունը կանոնակարգող իրավանորմերը՝ մասնավորապես 344-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասի դրույթները: Բողոքաբերը գտնում է, որ գործում առկա ապացույցներով հաստատված է, որ Նադեժդա Մարգարյանի մահից հետո բացվել է ոչ թե ըստ օրենքի ժառանգություն, այլ բացվել է ըստ կտակի ժառանգություն, քանի որ առկա է կտակ, որն էլ փաստացի տիրապետելու, կառավարելու, օգտագործելու եղանակով ընդունել է ինքը, իսկ այնուհետև ստացել ըստ կտակի ժառանգության վկայագիր ու դրա հիման վրա գրանցել սեփականության իրավունքը Կադաստրի մարմնում:

Վերաքննիչ դատարանը, սակայն, վերոգրյալը հաշվի չի առել, անտեսել է գործում առկա ապացույցները, կայացրել որոշում, որը չունի ոչ մի իրավական հիմնավորում:

Վերոգրյալի հիման վրա պատասխանող Կարեն Մարգարյանը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2016 թվականի մայիսի 31-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 2016 թվականի մարտի 4-ի վճռին կամ գործն ուղարկել Դատարան նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները

Վճռաբեկ բողոքի պատասխանում հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը գտնում է, որ վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ գործի քննության ընթացքում հաստատվել է, որ Հայցվորը հանդիսանում է Նադեժդա Մարգարյանի առաջին հերթի ժառանգը, որը վեճի առարկա հանդիսացող բնակելի

տանը բնակվում է ծննդյան օրվանից. ունի հաշվառում և ժառանգությունն ընդունելու ուղղությամբ կատարել է համապատասխան գործողություններ, ուստի խնդրել է Կարեն Մարգարյանի վճռաբեկ բողոքն ամբողջությամբ մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով բողոքարկված դատական ակտը:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. Համաձայն 24.07.2014թ. ԱԲ 198896, 198897 մահվան վկայականների, 12.06.1950թ. IE N375577 ծննդյան վկայականի՝ Հայցվորի հայրը՝ Հայկ Մարգարովը, մահացել է 1988թ. հուլիսի 20-ին, իսկ մայրը՝ Նադեժդա Մարգարյանը՝ 1994թ. մայիսի 11-ին:

2. Թիվ 1644 տեխնիկական գույքագրման քարտի, բնակելի տան տեխնիկական անձնագրերի, 31.01.1989թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ 1644 գույքագրման համարի տակ Ստեփանակերտ քաղաքի Կոմսոմոլսկայա /ներկայիս Մ.Սպարապետ/ փողոցի թիվ 13 տան /այսուհետ՝ բնակելի տուն/ նկատմամբ գրանցված էր Հայկ Մարգարյանի սեփականության իրավունքը և նա իրեն պատկանող բնակելի տան վերաբերյալ կտակ չի կազմել:

3. Հայկ Մարգարյանի մահից հետո՝ 1988թ. հուլիսի 20-ին, բնակելի տան նկատմամբ բացվել է ըստ օրենքի ժառանգություն:

4. 31.01.1989թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, 12.06.1950թ. IE N375577, I-NE N778646 ծննդյան վկայականների, 05.11.2015թ. տեղեկանքի և կողմերի ցուցմունքների համաձայն՝ Հայկ Մարգարյանի առաջին հերթի ժառանգներ են՝ նրա կինը՝ Նադեժդա Մարգարյանը և երեխաները՝ հայցվոր Արամայիս Մարգարյանը, Պատասխանողի հայրը՝ Կամո Մարգարյանը և երրորդ անձինք՝ Ռոզա Մարկարովան, Մարքարա Մարգարյանը, Ռայա Մարգարյանը և Ռիմա Ասրյանը:

5. 31.01.1989թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, թիվ 1644 տեխնիկական գույքագրման համարի տակ գրանցված բնակելի տան տեխնիկական անձնագրերի և թիվ 1644 տեխնիկական գույքագրման քարտի համաձայն՝ բնակելի տան նկատմամբ ըստ օրենքի ժառանգությունը ընդունել է միայն Նադեժդա Մարգարյանը:

6. 08.10.2003թ. դիմումի, 03.10.2003թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, սեփականության իրավունքի գրանցման 06.11.2003թ. թիվ 014156 վկայականի, ԱԲ 198897 մահվան վկայականի համաձայն՝ Հայցվորի մոր՝ Նադեժդա Մարգարյանի կողմից 1991թ. նոյեմբերի 01-ին կազմված կտակի հիման վրա Նոտարի կողմից 03.10.2003թ. Պատասխանողին տրվել է ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր, իսկ նշված վկայագրի հիման վրա 06.11.2003թ. լիազոր մարմնում գրանցվել է Պատասխանողի սեփականության իրավունքը՝ Ստեփանակերտ քաղաքի Մ.Սպարապետ փողոցի 13 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ:

7. Գործի նյութերում բացակայում է Նադեժդա Մարգարյանի կողմից 1991թ. նոյեմբերի 01-ին կազմված կտակը:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է մասնակիորեն բավարարման, իսկ դատական ակտը՝ բեկանման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ Գերագույն դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի...: Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից վկայակոչված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ:

<<ՀՀ 1998թ. քաղաքացիական օրենսգիրքը ԼՂՀ-ում կիրարկման մեջ դնելու մասին>> 18.05.2001թ. ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգիրքը կիրառվում է քաղաքացիական այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են օրենսգիրքը գործողության մեջ դնելուց հետո՝ բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի: Նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական օրենսգրքի տասնմեկերորդ բաժնի նորմերը կիրառվում են նաև այն ժառանգությունների նկատմամբ, որոնք բացվել են միջև օրենսգիրքը գործողության մեջ դնելը, սակայն չեն ընդունվել ժառանգներից ոչ մեկի կողմից և ժառանգման իրավունքով պետության կամ համայնքի սեփականությունը չեն դարձել մինչև 2001թ. հուլիսի 1-ը:

Գերագույն դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ սույն գործով կիրառելի է նախկինում գործող ՀԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգիրքը:

Իրավահարաբերության պահին գործող Հայկական ԽՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությանը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին:

Իսկ 3-րդ կետի համաձայն նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը /հայտարարությունը/ ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգների կողմից ժառանգությանը փաստացի տիրապետելը կամ կառավարելը:

Գերագույն դատարանը իր նախկինում կայացված որոշումներում անդրադարձել է ժառանգի կողմից փաստացի տիրապետման եղանակով ժառանգության ընդունման հարցին և նշել, որ ժառանգի կողմից ժառանգությունն ընդունած կամ չընդունած լինելու փաստի գնահատման հարցում էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք առկա են ժառանգի կամքը և ցանկությունը ընդունելու ժառանգությունը, թե ոչ, և արդյոք ժառանգությունն ընդունելու համար ժառանգը միջոցներ /ակտիվ գործողություններ/ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից և հավակնություններից պաշտպանելու համար /տե՛ս, օրինակ, ըստ հայցի Վեներա Գրիգորյանի ու Դոնարա Գալստյանի ընդդեմ Ռայա Գրիգորյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին ԸԻԴ 0413,0519/02/2012թ. գործով Գերագույն դատարանի 25.01.2013թ. որոշումը/:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, ԼՂՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Գերագույն դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Գերագույն դատարանը նշել է, որ դատաքննության դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի /նորմերի/, որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրացված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ, Գերագույն դատարանը արձանագրում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Մինչդեռ, սույն գործի փաստերը վերլուծելով՝ Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով չի իրականացվել պատշաճ քննություն, քանի որ գործին չի կցվել կտակը, չեն պարզվել ժամկետանց ըստ կտակի ժառանգության վկայագիր տրամադրելու հիմքերը, հետևաբար Վերաքննիչ դատարանի եզրահանգումն կտակի անվավերության վերաբերյալ Գերագույն դատարանը համարում է չհիմնավորված, քանի որ այն հիմնված չէ Դատարանում հետազոտված ապացույցների վրա: Ավելին, Վերաքննիչ դատարանի որոշման մեջ բացակայում է Հայցվորի կողմից ըստ օրենքի փաստացի ժառանգության ընդունման հիմնավորումները, ինչպես նաև ժառանգության ընդունման վերաբերյալ դրսևորած ժառանգների կամքը և ցանկությունը, և այն փաստացի ակտիվ գործողությունները, որոնցով կհիմնավորվեր նրանց կողմից ըստ օրենքի ժառանգության ընդունման փաստը, հետևաբար առկա է նոր քննության անհրաժեշտություն, որի ընթացքում անհրաժեշտ է պարզել արդյոք կողմերը հավասարապես են օգտվել սնից և յուրաքանչյուրը ունեցե՞լ է իր առանձնացված մասը, թե ոչ ու կոնկրետ ժառանգության ընդունման ուղղությամբ ի՞նչ գործողություններ են կատարվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում և այդ փաստացի բաժանումը կատարվել է արդյո՞ք կողմերի համաձայնությամբ:

Հաշվի առնելով, որ սույն գործով առկա է նոր քննության անհրաժեշտություն, Գերագույն դատարանը քննարկման առարկա չի դարձնում Վերաքննիչ դատարանի հայցային վաղեմության վերաբերյալ պատճառաբանության հիմնավորումները, սակայն արձանագրում է, որ նոր քննության ժամանակ անհրաժեշտ է պարզել, թե է՞քրք է կոնկրետ Հայցվորը տեղեկացվել վիճելի տան նկատմամբ Պատասխանողի անվամբ սեփականության իրավունքի գրանցման մասին:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի հետևությունները հիմնված չեն գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ

և օրյեկտիվ հետազոտման և գնահատման վրա, իսկ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի ըստ էության ճիշտ լուծման համար ունեն էական նշանակություն, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով սահմանված լիազորության ուժով՝ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, իսկ վերանայվող դատական ակտը բեկանել՝ գործն ուղարկելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ լրիվ ծավալող նոր քննության:

6. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վեճը վերջնական լուծում չի ստացել, Գերագույն դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Կարեն Մարգարյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի մայիսի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ